

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2018 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2018 թվականի առաջին կիսամյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենիի, Եղեգնաձոր, Գլաձոր, Վայք, Ջերմուկ և Զառիթափ համայնքներում բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 170.5 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 25.0հա , պտղատու այգի 145.5 հա, որոնք էլ կարծածվեն մարզի 2018 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 12 առաջարկություններ, որից 9-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարին, մնացած 3 -ը ընթացքի մեջ են:

Համաձայն մարզպետի 12.04.2018թ. թիվ 46 կարգադրության մարզի խոշորացված համայնքներում իրականացված այցելությունների ժամանակ համայնքի ղեկավարներին մեթոդական և խորհրդատվական աջակցություն ենք ցուցաբերել՝ հիմնականում ուշադրություն դարձնել համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի արդյունավետ ու նպատակային օգտագործմանը:

Հետևողական ենք եղել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվեն՝ ՀՀ հողային օրենսգրքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի համաձայնեցմանն ենք ներկայացրել Ջառիթափի և Ջերմուկի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման առաջարկությունները, որից Ջերմուկի համայնքի կողմից ներկայացված հողամասի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն, իսկ Ջառիթափի համայնքից ներկայացվածը ընթացքի մեջ է:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը հուլիսի 2018թ օտարվել է 69.9 հա, 76596225 դրամ.գումարով, վարձակալության է տրամադրվել 1633հա՝ կնքվել են 32 վարձակալական պայմանագիր:

Բաժինը ստացել է 6-ը քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ

Մ. Մեսրոպյան